ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 169

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Նոր Եդեսիա բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Նոր Եդեսիա բնակավայրի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-080-0004-0022, 02-080-0004-0058, 02-080-0004-0059 կադաստրային ծածկագրերով ընդհանուր 0.637 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք, արոտավայր, 02-080-0006-0026, 02-080-0006-0060 կադաստրային ծածկագրերով ընդհանուր 0.5432 հա մակերեսով բնակավայրերի այլ հողեր, 02-080-0548-0001 կադաստրային ծածկագրով 0.0718 հա մակերեսով բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողեր, 02-080-0006-0026, 02-080-0006-0060 կադաստրային ծածկագրերով ընդհանուր 0.07933 հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողեր	02-080-0004-0022, 02-080-0004-0058, 02-080-0004-0059 կադաստրային ծածկագրերով ընդհանուր 0.637 հա մակերեսով, 02-080-0006-0026, 02-080-0006-0060 կադաստրային ծածկագրերով ընդհանուր 0.5432 հա մակերեսով, 02-080-0548-0001 կադաստրային ծածկագրով 0.0718 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման և 02-080-0006-0026, 02-080-0006-0060 կադաստրային ծածկագրերով ընդհանուր 0.07933 հա մակերեսով բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Նոր Եդեսիա բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Եդեսիա բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 14 » «մայիսի» 2024թ.